ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ՄԵՂՐԱՁՈՐ

## համայնք

## (Մեղրաձոր, Գոռգոչ, Աղավնաձոր, Արտավազ, Փյունիկ, Հանքավան և Մարմարիկ բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

Մեղրաձոր խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում են Մեղրաձոր (համայնքի կենտրոն), Գոռգոչ, Աղավնաձոր, Արտավազ, Փյունիկ, Հանքավան և Մարմարիկ գյուղերը: Նախկին Մեղրաձոր համայնքի կազմում գտնվող Գոռգոչ գյուղը չունի մշտական բնակչություն: Փյունիկ գյուղը գտնվում էր նախկին Արտավազ համայնքի կազմում:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի Կոտայքի մարզի հյուսիսային հատվածում՝ Մարմարիկ գետի ավազանում ձևավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն, բնական ու ռեկրեացիոն ռեսուրսներով հարուստ այդ տարածաշրջանում ապահովել բնակավայրերի կայուն զարգացումը և բնակչության համար հանրային ծառայությունների մատուցման պատշաճ մակարդակ՝ կանխարգելով բնակչության արտահոսքը:

Համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 5881 մարդ, իսկ վարչական տարածքը կազմում է 15094 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Համայնքի բնակավայրերը տեղաբաշխված են Կոտայքի մարզի հյուսիսային հատվածում՝ Մարմարիկ գետի ավազանի լեռնանտառային ու լեռնային գոտիներում, Փամբակի և Ծաղկունյաց լեռների միջև: Բոլոր գյուղերը լեռնային կամ բարձրլեռնային են և գտնվում են ծովի մակերևույթից 1750մ-ից (Աղավնաձոր) մինչև 1965մ (Հանքավան) բարձրությունների վրա: Կլիման չափավոր է, ամառը՝ զով, խոնավ, ձմեռը՝ ձյունառատ, երկարատև:

Գյուղերի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, մեղվաբուծությունը, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցումը:

Համայնքի գյուղերում հայերից բացի ապրում են նաև ռուսներ (Մեղրաձորում և Հանքավանում), հույներ (Հանքավանում) և եզդիներ (Մարմարիկում): Որոշակի թիվ են կազմում նաև Ադրբեջանից բռնագաղթված հայերը (Հանքավան,Մեղրաձոր):

Մեղրաձորի տարածքում կան ոսկու, պղնձի, ալյումինի հանքավայրեր, Հանքավանում՝ մոլիբդենի և ոսկու: Հայտնի և պահանջված է Աղավնաձորի գրանիտը:

Արտավազում և Հանքավանում կան հանգստյան տներ և առողջարաններ: Տարածաշրջանը հարուստ է հանքային աղբյուրներով, որոնք ունեն բուժիչ նշանակություն: Ինչպես ռեկրեացիոն ռեսուրսների, այնպես էլ պատմամշակութային հուշարձանների առկայությունը կարող են նպաստել էկոտուրզմի և մշակութային տուրիզմի զարգացմանը:

***Համայնքի փվյալների համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*<u>1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.</u>*

Համայնքի կազմում ամենամեծ գյուղը Մեղրաձորն է, որի բնակչությունը 2016 թ. կազմել է 2662 մարդ, իսկ ամենափոքր գյուղի՝ Հանքավանի բնակչության թիվը 101 է (Աղյուսակ 1):

Մտահոգության տեղիք է տալիս համայնքի բնակչության շարժընթացի պատկերը. 2001-2016թթ. չի պակասել միայն Արտավազի բնակչությունը: Ընդհանուր առմամբ, բոլոր բնակավայրերի բնակչությունը նշված ժամանակահատվածում պակասել է 3 տոկոսով:

Բնակչության խտության ցուցանիշը միայն նախկին Աղավնաձոր համայնքի տարածքում է մոտ հանրապետության միջին ցուցանիշին, իսկ Արտավազում և Հանքավանում այն նույնիսկ պակաս է բարենպաստ կենսամիջավայրին բնորոշ նվազագույն ցուցանիշից: Խոշորացվող համայնքի տարածքում բնակչության խտությունը մոտ 3 անգամ պակաս է հանրապետության միջին ցուցանիշից:

Աղյուսակ 1.Մեղրաձոր խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք (բնակավայր) | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտություն/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Մեղրաձոր | 6208 | 2768 | 2662 | 96 | 43 |
| 2 | Աղավնաձոր | 1348 | 1366 | 1296 | 95 | 96 |
| 3 | Արտավազ | 4288 | 575 | 602 | 105 | 14 |
| 4 | Գոռգոչ | 0 | 0 | 0 | | |
| 5 | Հանքավան | 1848 | 111 | 101 | 91 | 5 |
| 6 | Մարմարիկ | 1402 | 786 | 769 | 98 | 55 |
| 7 | Փյունիկ | 0 | 421 | 421 | 100 | |
| | Ընդամ./միջին | 15094 | 6027 | 5851 | 97 | 39 |

*Ծանոթություն. Քանի որ Գոռգոչ և Փյունիկ գյուղերը նախկինում ընդգրկված են եղել Մեղրաձոր և Արտավազ համայնքներում, բնակչության խտության ցուցանիշը, ինչպես նաև հետագա հաշվարկների առանձին ցուցանիշներ ներկայացված են այդ համայնքների կտրվածքով:*

## *2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման*

Ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքային ու պետական սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները 1 բնակչի հաշվով նախկին Հանքավան համայնքում են (Աղյուսակ 2):

Հանքավանում քաղաքացիների և համայնքային սեփականության հողերի գումարային մակերեսը մոտ 15 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին: Պետական սեփականության գյուղատնտեսական հողերի մեծ ծավալներ կան նաև նախկին Մեղրաձոր և Արտավազ համայնքներում: Ընդհանուր առմամբ, խոշորացվող համայնքում մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերը 1 բնակչի հաշվով մոտ 2 անգամ ավելի են հանրապետության միջին ցուցանիշից:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Մեղրաձոր խոշորացվող համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016 | Գյուղատնտեսական հողեր | | | | | | | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային | Արդյունաբերության, ընդերք. ճ. և այլ արտադրական |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով | | | | | | |
| | | | | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | պետական սեփականություն | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Մեղրաձոր | 2662 | 1143.6 | 3414.6 | 4622.4 | 0.43 | 1.28 | 1.71 | 1.74 | 17.8 | 2876.4 | 43.5 |
| 2 | Գոռգոչ | 0 | | | | | | | | | | |
| 3 | Աղավնաձոր | 1296 | 327.3 | 783.0 | 839.5 | 0.25 | 0.60 | 0.86 | 0.65 | 48.0 | 1411.3 | 24.3 |
| 4 | Արտավազ | 602 | 506.4 | 1604.0 | 5598.2 | 0.84 | 2.66 | 3.51 | 9.30 | 116.7 | 1499.3 | 60.7 |
| 5 | Փյունիկ | 421 | | | | | | | | | | |
| 6 | Հանքավան | 101 | 122.8 | 1146.3 | 5534.0 | 1.22 | 11.35 | 12.57 | 54.79 | 13.8 | 1427.3 | 5.5 |
| 7 | Մարմարիկ | 769 | 254.5 | 866.7 | 636.7 | 0.33 | 1.13 | 1.46 | 0.83 | 32.5 | 1265.1 | 5.8 |
| | Ընդամ/միջ. | 5851 | 2354.6 | 7814.6 | 17230.8 | 0.40 | 1.34 | 1.74 | 2.94 | 228.7 | 8479.4 | 139.9 |

Անտառային ֆոնդի հողերը նույնպես խոշորացվող համայնքում բավարար են՝ մոտ 8,5 հազար հեկտար, և գրեթե հավասարաչափ բաշխված են բոլոր նախկին համայնքների տարածքներում:

Խոշորացվող համայնքում 139 հեկտար կազմող արտադրական նշանակության հողերի մեծ մասն օգտագործվում է ընդերքի արդյունահանման նպատակներով:

*3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման*

Սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից զգալիորեն բարձր են Մեղրաձոր համայնքի կազմում ընդգրկվող նախկին այն համայնքներում, որտեղ մեծ ծավալներ են կազմում գյուղատնտեսական և արտադրական նշանակության հողերը: Խոշորացվող համայնքում այդ ցուցանիշը հավասար է 11,4 հազար դրամի, ինչն ավելի քան 1,5 անգամ մեծ է հանրապետության միջին ցուցանիշից (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Մեղրաձոր համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Հաշվառված բնակչություն, 2016թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ/ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Մեղրաձոր | 2662 | 40490 | 15.2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Աղավնաձոր | 1296 | 8239 | 6.4 |
| 3 | Արտավազ | 602 | 10991 | 18.3 |
| 4 | Գոռգոչ | 0 | | |
| 5 | Հանքավան | 101 | 3048 | 30.2 |
| 6 | Մարմարիկ | 769 | 4058 | 5.3 |
| 7 | Փյունիկ | 421 | | |
| | Ընդամ./միջին | 5851 | 66827 | 11.4 |

*4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Մեղրաձոր համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը, ինչից կարելի է եզրակացնել, որ դրանք լիարժեքորեն բավարարում են համայնքների խոշորացման չափորոշիչներով նախատեսված պայմաններին:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Մեղրաձոր համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Բարձրությունը ծովի մակերևույթից | հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիության ցուցիչ | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Մեղրաձոր | 1800 | 14.4* | 18 | | Ընթաց.նոր |
| 2 | Աղավնաձոր | 1750 | 8.2 | 14 | Բարենպաստ | Ընթաց.նոր |
| 3 | Արտավազ | 1870 | 7.5 | 12 | Բարենպաստ | Ընթաց.նոր |
| 4 | Գոռգոչ | 1820 | 4.2 | 8 | Բարենպաստ | Ընթաց.նոր |
| 5 | Հանքավան | 1965 | 18.4 | 26 | Սահմ.բարենպ. | Բավարար |
| 6 | Մարմարիկ | 1750 | 4.6 | 10 | Բարենպաստ | Հիմնանոր. |
| 7 | Փյունիկ | 1820 | 5.6 | 12 | Բարենպաստ | Ընթաց.նոր |

**Հեռավորությունը մարզկենտրոնից*

*5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Մեղրաձորն ունի բավարար վիճակում գտնվող մանկապարտեզ՝ 120 տեղով և 90 հաճախող երեխայով: Համայնքի մնացած գյուղերը մանկապարտեզներ չունեն:

Միջնակարգ դպրոցներ կան Մեղրաձորում (600 աշակերտի համար նախատեսված և 301 աշակերտով, բավարար վիճակում), Աղավնաձորում (300 տեղով, 130 աշակերտով, բավարար վիճակում), Արտավազում (250 տեղով, 86 աշակերտով, ունի ընթացիկ նորոգման կարիք), Փյունիկում (200 տեղով, 40 աշակերտով, ունի ընթացիկ նորոգման կարիք) և Մարմարիկում (170 տեղով, 85 աշակերտով, բավարար վիճակում): Հանքավան գյուղը հանրակրթական հաստատություն չունի:

Ընթացիկ նորոգման կարիք ունեցող 550 տեղանոց մշակույթի տուն (մարզամշակութային կենտրոն) ունի Մեղրաձորը, հիմնանորոգման կարիք ունեցող, 300 տեղանոց՝ Աղավնաձորը, ընթացիկ նորոգման կարիք ունեցող, 200 տեղանոց՝ Մարմարիկը:

Առողջապահական հաստատություններից՝ բավարար վիճակում գտնվող ամբուլատորիաներ ունեն Մեղրաձորն ու Աղավնաձորը: Ընթացիկ նորոգման կարիք ունեցող բուժկետեր ունեն Արտավազը և Հանքավանը,    բավարար վիճակում գտնվող բուժկետ՝ Մարմարիկը:

Ընդհանուր առմամբ, խոշորացվող համայնքում կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտներով ապահովվածությունը հիմնականում բավարար մակարդակի վրա է, այսուհանդերձ ցանկալի է Մեղրաձորում տեսանելի ապագայում կառուցել հիվանդանոց:

Մեղրաձոր համայնքի կրթական, մշակութային ու առողջապահական օբյեկտների տարածքային տեղաբաշխումը ներկայացված է քարտեզի վրա:




*Հապավումներ..-Ա-Ամբուլատորիա, ԲԿ-Բուժկետ, ՄՏ-Մշակույթի տուն,  ՄՊ-Մանկապարտեզ, ՄԴ-Միջնակարգ դպրոց, ՄՄԿ –Մարզամշակութային կենտրոն*

Համայնքների խոշորացման չափորոշիչներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները Մեղրաձոր  համայնքի համար ներկայացված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5. Մեղրաձոր համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Լիարժեք չէ | |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար են | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Բավարար են | |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար են | Բացառություն է կազմում Հանքավանը |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար են | Բացառություն է կազմում Հանքավանը |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է | Ցանկալի է Մեղրաձորում նախատեսել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիվանդանոցի կառուցում |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Հիմնականում բավարար է | |

Այսպիսով, Մեղրաձոր համայնքը գործնականում բավարարում է խոշորացման 11 պայմաններին: Հիմնական շեղումը համայնքի կենտրոն Մեղրաձորի բնակչության թիվն է, որը պակաս է խոշորացման չափորոշիչներով սահմանված քանակից: Այսուհանդերձ, խոշորացվող համայնքի զարգացման և բնակչության արտահոսքի կանխարգելման պարագայում տեսանելի ապագայում հնարավոր կլինի ապահովել բնակչության աճը:

Որպես մասնակի շեղումներ կարելի է դիտարկել՝

Ա. Հանքավանում նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների բացակայությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը որ մինչև մոտակա Արտավազ գյուղ հեռավորությունը կազմում է 13 կիլոմետր՝ այդ շեղումը կարելի կլինի չեզոքացնել խոշորացվող համայնքում միկրոավտոբուսի առկայությամբ.

Բ. Խոշորացվող համայնքում հիվանդանոցի բացակայությունը, ուստի ցանկալի է նախատեսել դրա կառուցումը Մեղրաձորում:

***Մեղրաձոր համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը, ծառայությունների մատուցման հասանելության ապահովումը և արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել բնական ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների, մասնավորապես, արտադրական կարողությունների, ռեկրեացիոն համակարգերի զարգացման և արդիակցման գծով ներդրվող գումարների առավել նպատակային և համակարգված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը, մասնավորապես, ընդերքի արդյունահանմանը զուգահեռ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծումը, ինչը հնարավոր կլինի ապահովել միայն արդիական տեխնոլոգիաների կիրառումով,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես ընդերքի արդյունահանման, ռեկրեացիայի և զբոսաշրջության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Բացի ընդհանուր արդյունքներից, Մեղրաձոր համայնքի և տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոնի կազմավորումը զարգացման նախադրյալներ կստեղծի Կոտայքի մարզի հյուսիսային հատվածում, միասնական բնական-աշխարհագրական միջավայրում՝ Մարմարիկ գետի ավազանում տեղաբաշխված գյուղերի համար:

Հարկ է նշել, որ տարածաշրջանի գյուղերի զարգացման վրա շոշափելի դրական ազդեցություն կարող է ունենալ Հանքավան-Թթուջուր (Արագածոտնի մարզ) հանրապետական նշանակության ավտոմայրուղու հիմնանորոգումն ու լիարժեք գործարկումը: Բացի այդ, խոշորացվող համայնքում արտադրական, սոցիալ-տնտեսական և այլ ենթակառուցվածքների արդիականացման ու զարգացման խնդիրները հստակեցնելու նպատակով ցանկալի է մշակել համայնքի տարածքային զարգացման նախագիծը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de